

Համարը N 823-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2012.12.03/25(215)  
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.12.2012

Տեսակը Ինկորպ  
Կարգավիճակը Գործու  
Ընդունման վայրը Ստեփա  
Ընդունման ամսաթիվը 20.11.20  
Ստորագրման ամսաթիվը 20.11.20  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ **Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԼԻԱԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԾԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 904 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

0» և այլն 2012թ.

N 823

ք. Ստեփանակերտ

**ԼԻԱԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԾԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 904 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 7-րդ, Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ, «Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

**(Նախաբանը փոփ. 11.05.2018 N 347-Ն)**

1. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը վերապահել հետևյալ բնագավառներում **լիազոր պետական** մարմնի իրավասությունները.

1) անտառների պահպանություն, պաշտպանություն, վերարտադրություն և օգտագործման նկատմամբ **պետական** վերահսկողություն.

2) ընդերքի օգտագործման և պահպանության նկատմամբ **պետական** վերահսկողություն.

3) ընդերքի ուսումնասիրության և հանքարդյունահանման նպատակով ընդերքի օգտագործման տրամադրում.

4) բնապահպանական վերահսկողություն.

5) թափոնների կառավարում.

6) որսի կենդանիների և որսահանդակների պահպանություն, պաշտպանություն, կայուն օգտագործում և վերահսկողություն, որսի և որսորդական տնտեսության վարման բնագավառում վերահսկողություն.

7) մթնոլորտային օդի պահպանություն.

8) բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծում, առանձնացում, կառավարում, պահպանություն և օգտագործում:

**(1-ին կետը փոփ. 11.05.2018 N 347-Ն)**

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի «Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում **լիազոր** ված մարմինների իրավասությունները սահմանազատելու և Լեռնային

Ղարաբաղի հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 333 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 904 որոշումը:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**